

Հայ ըմբիշն գայն ձեռներուն վրայ բռնելով՝ հանդիսականներուն կհարցունէ, թէ ո՛ր նետէ այդ բեռն...:

Պ. Տուպիլէ, գոր տասնեւիններորդ դարու Աքիլլէս կկոչեն՝ պարտութիւնն չընդունէր, առարկելով թէ ինք օտար է տաճկական ըմբշամարտութեան: Հայ բեռնակիրն կհաւանի գաղղիական ըմբշամարտութեամբ անոր դէմն ելնելու եւ երկրորդ անգամ կգետնէ գայն:

Պ. Տուպիլէն դրամ կխոստանայ Պ. Միմոնին, որ անգամ մ'ալ ան յաղթուի, որպէսզի իւր վաստակած համբաւն չարատի: Պ. Միմոն կմերժէ այս դրամական ըմբշամարտութիւնն: Այժմ մեր ազգայիններէն ոմանք հանգանակութիւն մը կ'ընեն իրենց մէջ՝ հայ ըմբիշին նուէր մը ընելու նպատակաւ:

23 Նոյեմբեր

Կ'ըսեն թէ միութիւնն աղէկ բան է:

Իմ կարծիքով՝ միութիւնն մեր ազգին համար աղէկ չէ:

Տարի մը առաջ Իւսկիւտարի երեք դպրոցներն իրարու հետ միացան եւ ետքը աւելի խեղճ ըլլալով՝ իրարմէ բաժնուեցան:

Քանի մը ամիս կայ, որ Արարատեան, Կիլիկեան եւ Դպրոցասիրաց - Արեւելեան ընկերութիւններն միանալով՝ *Միացեալ Ընկերութիւնք* եղան, եւ այսօր յիշեալ *Միացեալ Ընկերութիւնքը* չունին այն նախանձելի վիճակն, գոր ունէին ասկէ առաջ:

Կրնա՞ք ուրանալ, թէ անմիաբանութիւնն ալ ունի իւր օգուտները:

25 Նոյեմբեր

Թուրքիոյ կառավարութիւնն իւր պաշտօնէաներուն ամսականները ամեն ամսու գլխուն վճարելու համար նոր միջոց մը պիտի գտնէ եղեր:

Պիտի որոշէ եղեր, որ մէկ ամիսն հարիւր ութսուն օրերէ բաղկանայ:

26 Նոյեմբեր

Իգմիրի փողոցներուն պատերու վրայ հետեւեալ ազդարարութիւնը կախուած է տեղւոյն գողերուն կողմէն.–

«Գիշերները դուրս ելնողներն առ նուազն իրենց քսակին մէջ երեք մէճիտիէ ունենալու են. ապա թէ ոչ իրենց կեանքը վտանգի մէջ պիտի ըլլայ»: